«ՎՐԱՍՏԱՆ»
«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 78 - 79 (16376) ՇԱԲԱԹ, 24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ-ԻՍՐԱՅԵԼ

# ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ԻՍՐԱՅԵԼ



*Հոկտեմբերի 19-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, առաջին տիկին Մակա Չիչուայի ուղեկցությամբ, պաշտոնական երկօրյա այցով մեկնեց Իսրայել:*

Այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ Իսրայելի նախագահ Ռեուվեն Ռիվլինի, վարչապետ Բենիամին Նաթանյահուի, Կնեսետի նախագահ Յու.Էդելշտեյնի եւ խորհրդարանական ընդդիմության ղեկավարների հետ:

Երկու երկրների նախագահների հանդիպմանը կողմերը քն-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՌՈՒՍԹԱՎԻ-2»-Ի ՇՈՒՐՋ ԾԱՎԱԼՎՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՉԵՆՔ»

*Հոկտեմբերի 22-ին Վրաստանի կառավարության նիստում վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, անդրադառնալով «Ռուսթավի-2» հեռուստաընկերության շուրջ ծավալվող իրադարձություններին, հայտարարեց, որ լրատվամիջոցները կեղծ լուրեր են տարածում:*



Նրա խոսքերով, նախորդ իշխանության մեթոդների կիրառումը չի համապատասխանում «Վրացական երազանքի» շահերին: «Դա մեզ պետք չէ, քանզի մենք «Ռուսթավի-2»-ի շուրջ ծավալվող գործընթացներին ներգրավված չենք: Եթե կառավարեինք նախորդ իշխանության մեթոդներով, ապա հավատացնում եմ, որ այդքան ժամանակ չէր պահանջվի, եւ այդ մարդկանց իրավունքները ավելի շուտ կսահմանափակվեին: Կրկին անգամ բոլորին կոչ եմ անում, ըստ արժանվույն գնահատեն ժողովրդավարական այն պայմանները,

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

# ՆԱԽԱԳԱՀԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՌԹԻՎ



*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին արտակարգ հայտարարություն է տարածել «Ռուսթավի-2» հեռուստաընկերության շուրջ առկա լարվածության, «Միասնական ազգային շարժում» կուսակցության գրասենյակների դեմ հարձակումների եւ մի շարք այլ գործընթացների կապակցությամբ, որոնք կարող են խաթարել երկրի խաղաղությունն ու կայունությունը:*

Նրա խոսքով, վարչապետի հայտարարությունը, իրավիճակը մեղմացնելու փոխարեն, ավելի մեծ լարվածություն է առաջացնելու՝ է՛լ ավելի բարդացնելով առանց այն էլ բարդ իրավիճակը: Նախագահն ընդգծեց, որ վերջին օրերի գործընթացները նախադրյալներ են ստեղծել սահմանադրական կարգի խախտումների եւ երկրի քաղաքացիական դիմակայության համար:

«Երկրի սահմանադրության պաշտպանությունը յուրաքանչյուր քաղաքացու եւ առաջին հերթին Վրաստանի իշխանությունների պարտականությունն է: Բոլորին կոչ եմ անում զերծ մնալ կտրուկ քայլերից ու զգացմունքներին տրվելուց՝ պահպանելու քաղաքա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

# ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԿՈՉ

*Բոլոր քաղաքական գործիչները պետք է հրաժարվեն բռնության եւ դիմակայության կոչերից:*

Այդ մասին ասված է Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու՝ հոկտեմբերի 22-ին տարածած հայտարարության մեջ:

«Իշխանության գլուխ գտնվող կամ ընդդիմությանը պատկանող բոլոր քաղաքական գործիչները միանշանակ եւ անվերապահորեն պետք է հրաժարվեն բռնության եւ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԻՐԱՎԱԿԱՆ

# ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԶՏՄԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ

*Հոկտեմբերի 15-ին, 2008 թվականի օգոստոսյան պատերազմում էթնիկական զտման հետ առնչվող փաստերի հետաքննության նպատակով, Թբիլիսի ժամանեց Հաագայի միջազգային քրեական դատարանի դատախազ Ֆատու Բենսուդը:*

Այցի շրջանակներում, Վրաստանի արդարադատության նախարարությունում կայացած հանդիպմանը նախարար Թեա Ծուլուկիանին եւ Վրաստանի գլխավոր դատախազ Գիորգի Բադաշվիլին ներկայացրին օգոստոսյան պատերազմին վերաբերվող վրացական կողմի տրամադրության

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ԲԱՐԻԴՐԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎՍ ՄԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

## ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԿԺԱՄԱՆԻ ԹԲԻԼԻՍԻ

*Խմբագրության տեղեկատվության համաձայն, հոկտեմբերի 30-31-ին, աշխատանքային այցով, Թբիլիսիում կգտնվի Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:*



Հայաստանի նախագահի սույն այցը պատկանում է երկու երկրների բարձրագույն ղեկավարների արդեն ավանդույթի ուժ ստացած պարբերական այն փոխայցելությունների թվին, որոնք կոչված են վավերացնել Վրաստանի եւ Հայաստանի միջեւ քաղաքական, տնտեսական, մշակութային եւ մյուս ոլորտներում համագործակցության նոր մակարդակի հաստատումը, ընդգծում են անցյալի ձեռքբերումները, կանխագծում կատարելիքի հեռանկարները:

Այցի շրջանակներում, Հայաստանի նախագահը հանդիպումներ կունենա Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ:

Հոկտեմբերի 31-ին Սերժ Սարգսյանը կմասնակցի Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու վերաօծման արարողությանը:

# ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԸ ԿՎԵՐԱՕԾԻ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻՆ



Հոկտեմբերի 31-ին, եռամյա վերանորոգումից հետո, հավատացյալների առջեւ իր դռները կբացի Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցին:

Եկեղեցու վերաօծման կարգը կկատարվի հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի:

Վեհափառ Հայրապետը Թբիլիսի կժամանի հոկտեմբերի 30-ին:

Այցի շրջանակներում, Գարեգին Երկրորդը կայցելի Վրաց պատրիարքարան, որտեղ հանդիպում կունենա Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ:

# «ԵՐԲ ԽՈՍՈՒՄ ԵՆ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԸ...»

## ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ «ԺԱՄԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ»

### ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆ ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

*Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը հարցազրույց է տվել «Արգումենտի ի ֆակտի» միջազգային հրատարակչությունում: Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում շաբաթաթերթի ընթացիկ տարվա հոկտեմբերի թիվ 41 համարում լույս տեսած հարցազրույցը:*



«ԱՐՖ-Թբիլիսի» թերթի հյուր, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը պատմում է երկու հարեւան երկրների փոխհարաբերությունների մասին: Հայաստանի նախագահի նախկին խորհրդականը եւ Հայաստանի սպորտի եւ երիտասարդության հարցերի նախկին նախարարը դիվանագիտական ասպարեզ մուտք գործեց մարզական ու հասարակական ակտիվ գործունեությունից հետո: Հանրահայտ ծանրամարտիկի, աշխարհի յոթակի չեմպիոնի, Օլիմպիական խաղերի (1980) չեմպիոնի, Եվրոպայի հնգակի չեմպիոնի եւ աշխարհի քառասուներեքակի ռեկորդսմենի անունը 1994 թվականին գրանցվեց ծանր

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԹԲԻԼԻՍՈԲԱ - 2015

# ԳԻՎԻ ՇԱՀՆԱԶԱՐԸ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ

## ԹԲԻԼԻՍԻՆ 36-ՐԴ ԱՆԳԱՄ ՆՇԵՑ ԻՐ ՏՈՆԸ

*Հոկտեմբերի 17-18-ին Թբիլիսին նշեց իր ավանդական «Թբիլիսոբա» տոնը:*



Տոնը հագեցած էր թեմատիկ մշակութային-ժամանցային տարբեր միջոցառումներով, անցկացվեցին մշակութային եւ խոհարարական փառատոներ, համերգներ, մարզական մրցաշարեր եւ ծրագիր՝ երեխաների համար:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԹԲԻԼԻՍՈԲԱ - 2015

# ԳԻՎԻ ՇԱՀՆԱԶԱՐԸ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ավանդույթի համաձայն, տոնական միջոցառումներն անցկացվեցին Թբիլիսիի կենտրոնում, Ռիղե զբոսայգում, Աբանոթուբանիում եւ Շարդենում:

«Թբիլիսոբայի» շրջանակներում, հոկտեմբերի 16-ին տեղի ունեցավ շրջակա միջավայրի պաշտպանության ռազմավարության շնորհանդեսը եւ «Պատվավոր թբիլիսցի» կոչման շնորհումը: Այս տարի Թբիլիսիի պատվավոր քաղաքացու կոչման արժանացած 11 արժանավորների թվում էին




բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, գրող Լաշա Թաբուկաշվիլին, երգիչ Փոլադ Բյուլ-Բյուլ Օղլին, նկարիչ Գիա Ջափարիձեն եւ ուրիշներ:

Միջոցառումը ավարտվեց Գորգասալու հրապարակում, «Երգեր Թբիլիսիի մասին» գալա-համերգով:

*«Վրաստան» թերթը խմբագրակազմը՝ իր եւ ընթերցողների անունից, ի սրտե շնորհավորում է մեր հանրաճանաչ թարգմանիչ-բանաստեղծ, Ի.Մաչաբելու, Ի.Ճավճավաձեի, Գ.Տաբիձեի, Ե.Չարենցի, Վ.Սարոյանի անվան գրական մրցանակների դափնեկիր, Վրաստանի «Պատվո» եւ Հայաստանի «Մովսես Խորենացի» շքանշանների ասպետ Գիվի Շահնազարին արժանի կոչման առթիվ:*

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՌՈՒՍԹԱՎԻ-2»-Ի ՇՈՒՐՋ ԾԱՎԱԼՎՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՉԵՆՔ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

որոնք մենք հիմնել ենք, դրանով ապահովել բոլորին՝ անկախ քաղաքական պատկանելությունից եւ հայացքներից»,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց. «Մեր գլխավոր սկզբունքները չեն փոխվել: Դա մամուլի ազատությունն է: Այն, ինչ կատարում է «Ռուսթավի-2»-ի շուրջ, ցանկանում եմ հրապարակավ վավերացնել, դրանում իշխանության ներգրավումը բացառվում է: Դա մասնավոր վեճ է երկու սուբյեկտների՝ Սաակաշվիլու եւ Քիբար Խալվաշու միջեւ»,- նշեց վարչապետը:

Նրա խոսքերով, անկախ, ազատ դատարանին պետք է տրվի օբյեկտիվ որոշում ընդունելու հնարավորություն:

Անդրադառնալով «Ռուսթավի-2»-ի գլխավոր տնօրեն Նիկա Գվարամիայի հայտարարությանը, իբր իշխանությունները վարկաբեկման եւ սպառնալիքով պարտադրում են, որ ինքը հրաժարվի գլխավոր տնօրենի պաշտոնից, վարչապետը նշեց, որ դա ավելի շուտ նման է սադրանքի: Ի.Ղարիբաշվիլին նաեւ նշեց, որ այդ հարցը հարկ է հետաքննել:

Նշենք, որ Վրաստանի գլխավոր դատախազությունը սկսել է այդ գործի հետաքննությունը:

# ՆԱԽԱԳԱՀԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՌԹԻՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցիական խաղաղությունը»,- ասաց նա:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին քաղաքացիական կայունությունը պահպանելու համար բանակցություններ է սկսում քաղաքական կուսակցությունների, դիվանագիտական կորպուսի եւ ոչ կառավարական կազմակերպությունների հետ: Այդ մասին հոկտեմբերի 22-ին ճեպասուլիսում հայտարարեց Վրաստանի նախագահը եւ նշեց, որ վերջին օրերին Վրաստանում տեղի ունեցող իրադարձությունները՝ «Ռուսթավի-2» հեռուստաընկերության գործով դատաքննությունը, որը լայն արձագանք է գտել հասարակության մեջ, եւ կտտանքների վերաբերյալ սկանդալային տեսագրությունների տարածումը, որոնք հրապարակվել են անցած կիրակի օրը, նպաստել են քաղաքական կլիմայի սրմանն ու նախադրյալներ են ստեղծել սահմանադրական կարգի խախտումների եւ քաղաքացիական դիմակայության համար:

# ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԿՈՉ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ֆիզիկական դիմակայության ուղղակի կամ անուղղակի կոչերից ու արդարացումներից»,- նշված է խորհրդարանի նախագահի հայտարարության մեջ, որը հրապարակվել է օրենսդիր մարմնի կայքում:

Վրաստանի խորհրդարանի ղեկավարը նշեց, որ քաղաքական գործիչների հետ իր համագործակցությունը կախված կլինի այս պայմանների կատարումից:

«Այս նվազագույն ստանդարտների բավարարումն ապագայում կդառնա ցանկացած քաղաքական գործչի հետ իմ համագործակցության եւ երկխոսության շարունակման պայմանը»,- ասված է Ուսուփաշվիլու հայտարարության մեջ:

Իր հերթին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, մեկնաբանելով հոկտեմբերի 18-ին տարածված տեսակադրերը՝ կտտանքների ու բռնության տեսարաններով, որոնք, ինչպես պարզվել է, ոստիկանության բարձրաստիճան աշխատակիցների կողմից կատարվել են 2011 թվականին, հայտարարեց, որ «Միասնական ազգային շարժում» նախկին իշխող կուսակցության անդամներն արժանի են պատժվել վրաց ժողովրդի կողմից:



# ԱՆԲԱՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

***Վրաստանի կառավարության հոկտեմբերի 22-ին կայացած նիստի ավարտից հետո, երկրի գործադիր իշխանության ներկայացուցիչները իրենց անբավականությունն հայտնեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու արտակարգ հայտարարության կապակցությամբ:***

Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հայտարարությունը գնահատեց՝ որպես «դատավորի վրա անմիջական ճնշում»: Նա նախագահին կոչ արեց լրացուցիչ պարզաբանումներ ներկայացնել հայտարարության առթիվ: «Նրա կողմից դա միջամտություն է, դատավորի վրա ճնշման գործադրում, քանի որ Մարգվելաշվիլին դատավորին կոչ է անում չընդունել արագ եւ խիստ որոշումներ»,- հայտարարեց Կալաձեն:

Իր հերթին, պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին նախագահի հայտարարությունը անվանեց անպատասխանատու եւ նշեց, որ Վրաստանի սահմանադրական կարգին չինչ չի սպառնում: «Երկրի նախագահը նման հայտարարություններ չպետք է անի: Մինչեւ որեւէ մեկին դիտողություն անելը, թե իբր ինչ-որ բան են սրում, հենց նրա կողմից նման հայտարարություններն են սրում իրավիճակը»,- հայտարարեց Խիդաշելին:

Հատկանշական է, որ «Մաեստրո» հեռուստաընկերության կողմից եթերում անցկացված հարցման արդյունքներով, հեռուստադիտողների 85 տոկոսը հավանություն տվեց վիճարկելի հարցում Վրաստանի վարչապետի դիրքորոշմանը:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ԷԻՆ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 15-16-ին անցկացվեց «Թբիլիսի. Մետաքսե ճանապարհ» խորագրով համաժողովը:***



Վրաստանի կառավարության կողմից նախաձեռնված եւ Չինաստանի կառավարության ու Ասիական զարգացման բանկի աջակցությամբ կազմակերպված այս համաժողովում քննարկվեց Մետաքսե ճանապարհի տնտեսական գոտու նախագծի շրջանակներում տնտեսական համագործակցության զարգացմանն առնչվող հարցերի ընդգրկուն ցանկ: Համաժողովին մասնակցեց Հայաստանի պատվիրակությունը՝ երկրի էկոնոմիկայի նախարար Կարեն Ճշմարիտյանի գլխավորությամբ:

Համաժողովի շրջանակներում, Կարեն Ճշմարիտյանն անցկացրեց մի շարք հանդիպումներ, մասնավորապես, Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլու ու էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Դմիտրի Քումսիշվիլու հետ: Հանդիպումներին կողմերը քննարկեցին վրացհայկական առեւտրատնտեսական համագործակցության խորացման նոր հնարավորությունները:

Թբիլիսիում Կարեն Ճշմարիտյանը հանդիպում ունեցավ նաեւ համաժողովին մասնակից Չեխիայի առեւտրի եւ արդյունաբերության նախարար Ջան Մլադեկի, Ասիական զարգացման բանկի (ADB) փոխնախագահ Վենկայի Ժանգի, ԱՄՆ-ի էներգետիկ ռեսուրսների կոմիտեի քարտուղարի օգնականի տեղակալ Ռոբերտ Իչորդի, ինչպես նաեւ Աֆղանստանի էկոնոմիկայի նախարար Աբդուլ Սաթար Մուրադի հետ: Հանդիպումների ընթացքում զրուցակիցներն անդրադարձան տնտեսական ոլորտում երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերին:



ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՍԻՐԻԱ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԹԵՄԱՆ ԷՐ

*Սիրիական հակամարտության սկզբից, որը երկրում բռնկվել է 2011թվականի մարտին եւ մինչ օրս շարունակվում է, նախագահ Բաշար ալ Ասադը մշտապես եղել է իր երկրում: Առաջին անգամ շուրջ հինգ տարի շարունակվող հակամարտության ընթացքում աշխատանքային այցով նա ժամանեց Մոսկվա, որտեղ կայացավ նրա հանդիպումը Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Երկու նախագահները քննարկել են Սիրիայում ահաբեկչության դեմ ռազմական գործողությունների շարունակության վերաբերյալ հարցեր: Սիրիայի նախագահ Ասադը Վլադիմիր Պուտինին ներկայացրել է երկրի իրավիճակը, ինչպես նաեւ սիրիական բանակի պլանները եւ ռազմական գործողությունների ընթացքը:*

*Ռուսաստանը, Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադի խնդրանքով, սեպտեմբերի 30-ին սկսել է հարվածել «Իսլամական պետություն» ահաբեկչական կազմակերպության դիրքերին:*

ԵՎՐՈՊԱ

## ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է 680 ՀԱԶԱՐԸ

*Տարեսկզբից ծովային ճանապարհներով Եվրոպա ժամանած միգրանտների ու փախստականների թիվը գերազանցել է 680 հազարը: Այդ մասին հայտնել է Միգրացիայի միջազգային կազմակերպության մամուլի քարտուղար Ջոել Միլմանը:*

*ՄՄԿ-ի տվյալներով, տարեսկզբից Եվրոպա եկածների թվաքանակը հոկտեմբերի 23-ի դրությամբ հասել է 681 հազար 132-ի: Միջերկրական ծովը հատելիս՝ զոհվել կամ անհայտ կորել է 3 հազար 138 մարդ:*

*Եվրահանձնաժողովն ավելի վաղ հայտարարել է, որ աշխարհում տիրող ներկայիս միգրացիոն ճգնաժամը խոշորագույնն է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակներից ի վեր:*

ՆԱՏՕ

## ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԺԱՆՔՆԵՐ ՎԵՐՋԻՆ 13 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

*ՆԱՏՕ-ն սկսում է վերջին 13 տարվա ընթացքում խոշորագույն Trident Juncture - 2015 ռազմավարական դաշտային վարժանքները: Այդ մասին հայտարարեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ալեքսանդր Վերշբոուն:*

*Trident Juncture - 2015-ը բաղկացած է երկու փուլից. վարժանքների հրամանատարաշտաբային մասը տեղի է ունեցել հոկտեմբերի 3-ից մինչեւ 16-ը, իսկ դաշտային զորավարժությունները կանցկացվեն հոկտեմբերի 21-ից մինչեւ նոյեմբերի 6-ը:*

*Զորավարժությունների շտաբային մասն անցկացվել է Կանադայում, Նորվեգիայում, Գերմանիայում, Բելգիայում եւ Նիդերլանդներում: Դաշտային վարժանքները կանցկացվեն Իտալիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում եւ Միջերկրական ծովի արեւմտյան մասում: Դրանցում գործի են դրված 36 հազար մարդ, 140 ինքնաթիռ եւ մինչեւ 90 ստորջրյա եւ վերջրյա նավեր՝ 30 պետություններից, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի մեջ չմտնող Ավստրիայից եւ Շվեդիայից:*

ՖՐԱՆՍԻԱ

## ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐ՝ ՄԵԾ ԶՈՀԵՐՈՎ

*Հոկտեմբերի 23-ի առավոտյան Ֆրանսիայի հարավ-արեւմուտքի Ժիրոնդայի դեպարտամենտում տեղի է ունեցել մեծաթիվ զոհերով ողբերգական միջադեպ: Բախվել են մարդատար ավտոբուսն ու բեռնատարը: Ճակատային բախման հետեւանքով երկու փոխադրամիջոցներն էլ բռնկել են, զոհվել է առնվազն 42 մարդ, հինգը վերքեր են ստացել, երկուսը ծանր վիճակում են: Իշխանությունների տվյալներով, բոլոր զոհվածներն ու տուժածները տեղացի բնակիչներ են:*

# Ճարաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ-ԻՍՐԱՅԵԼ

## ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նարկեցին երկու երկրների հարաբերությունների խորացման հարցերը: Նախագահները բանակցություններ են վարել դեմ առ դեմ, ինչպես նաեւ ընդլայնված ձեւաչափով:

Երուսաղեմում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն հանդիպմանը քննարկեցին գլոբալ անվտանգության հարցեր:

Հանդիպմանը խոսեցին նաեւ երկկողմ համագործակցության մասին, ինչպես նաեւ արծարծվեցին ռուս-վրացական հարաբերությունների հետ կապված հարցեր:

Այցի շրջանակներում, Գիորգի Մարգվելաշվիլին այցելեց նաեւ Հոլոքոստի թանգարան, իսկ Վրաստանի առաջին տիկինը Իսրայելի մանկական կլինիկաներ:

ԱՅՑ

## ՎՐԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐ ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ



*Հոկտեմբերի 19-20-ին Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Ադրբեջանում:*

Այցի շրջանակներում, Վրաստանի ԱԳ նախարարը հանդիպում ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի, վարչապետ Արթուր Ռասիզադեի, իր գործընկերոջ՝ Էլմար Մամեդյարովի հետ:

Ադրբեջանի նախագահի հետ՝ բարեկամական ջերմ մթնոլորտում ունեցած հանդիպմանը կողմերը քննարկեցին երկու երկրների միջեւ ռազմավարական համագործակցության խորացման հեռանկարները: Ընդգծվեց համագործակցության բարձր մակարդակը եւ դրա զարգացման դինամիկան: Առանձնակի ուշադրություն հատկացվեց էներգետիկայի եւ տրանսպորտի ոլորտներում համագործակցության ընդլայնման, մասնավորապես, էներգետիկական հարավային միջանցքի նախագծի իրականացման թեմային:

ԻՐԱՎԱԿԱՆ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԶՏՄԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տակ եղած նյութերը:

Թեա Ծուլուկիանու խոսքերով, Ֆատու Բենսուդը հայտարարեց, որ նրա ներկայացրած փաստաթղթում Ռուսաստանի դերը անհամապատասխան է ներկայացվել: Արդարադատության նախարարը Հաագայի միջազգային դատարանի դատախազին հիշեցրեց, որ մինչ օրս երկրի տարածքների բռնազավթումը շարունակվում է:

Իր հերթին, Ֆատու Բենսուդը նշեց, որ ինքը բավարարված է Վրաստանի իշխանությունների հետ համագործակցության մակարդակով: Նրա խոսքերով, համագործակցությունն իրականացվում է բոլոր հարցերով, այդ թվում՝ եւ ռուս խաղաղարարների հրետանակոծության թեմայով: «Մենք բավարարված ենք Վրաստանի իշխանությունների հետ համագործակցության մակարդակով: Վրացական կողմը բոլոր նյութերը ներկայացրել է: Վրաստանի արդարադատության նախարարը վստահեցրեց, որ նման համագործակցությունը կշարունակվի նաեւ առաջիկայում»,- հայտարարեց Ֆատու Բենսուդը:



Ինչպես տեղեկացրել են Վրաստանի արդարադատության նախարարությունից, գերատեսչության կայքում տեղակայվել է տեղեկատվություն, որը օգոստոսյան պատերազմից տուժվածներին թույլ կտա համագործակցել միջազգային դատարանի հետ: Տուժվածները Հաագայի դատարանին կարող են դիմել մեկ ամսվա ընթացքում, մինչեւ նոյեմբերի 12-ը եւ ներկայացնել իրենց հայտերը: Եթե նախադատական պալատը դատախազին հետաքննությունն անցկացնելու թույլտվություն շնորհի, տուժվածները իրավասու են իրենց ներկայացնել ցուցմունքները եւ պահանջել վնասի փոխհատուցում:

## ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

***Վրաստանի ներքին գործերի նախարարությունը հրապարակեց 2015 թվականի սեպտեմբերի եւ հունվար-սեպտեմբերի իրավախախտումների հաշվետվությունը, որտեղ ներառված են հետաքննչական բոլոր մարմինների՝ ՆԳ նախարարության, գլխավոր դատախազության, արդարադատության նախարարության, պաշտպանության նախարարության, պատիժների կատարման եւ պրոբացիայի նախարարության, ֆինանսների նախարարության համապատասխան ծառայությունների տվյալները:***

Վիճակագրական տվյալների համաձայն, 2015 թվականի սեպտեմբերին գրանցվել է 3402 իրավախախտում, որից 1529-ը բացահայտվել է: Բացահայտման ցուցանիշը կազմել է 44,94 տոկոս: Նախորդ տարվա համեմատությամբ, իրավախախտումների թիվը նվազել է 5,24 տոկոսով: Տարածաշրջանային իրավապահ ստորաբաժանումների կողմից հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է 2175 իրավախախտում, որից 1340-ը (61,61 տոկոսը) բացահայտվել է: Նախորդ տարվա համեմատությամբ, իրավախախտումների թիվը նվազել է 10,35 տոկոսով:

Ինչ վերաբերում է 2015 թվականի հունվար-սեպտեմբերի վիճակագրությանը, ապա հետաքննչական բոլոր մարմինների կողմից գրանցվել է 26452 իրավախախտում, որից 15245-ը բացահայտվել է (57,63 տոկոսը): Նախորդ տարվա համեմատությամբ, իրավախախտումների թիվը նվազել է 4,48 տոկոսով:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՈՒԹ ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ



***Եվրամիության՝ գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման ENPARD ծրագրի հարցով անկախ հաշվետվության մեջ նշվել է, որ Եվրամիության ֆինանսական աջակցությամբ Վրաստանի գյուղատնտեսության նախարարությունը ձեռնարկել է առաջընթաց կարեւոր քայլեր, ինչը նախատեսում է 888 ֆերմերական կոոպերատիվների եւ 54 տարածաշրջանային խորհրդատվական կենտրոնների հիմնում:***

Անցյալ տարվա ընթացքում գյուղատնտեսական արտադրանքի թողարկումը ավելացել է 10 տոկոսով:

Ելնելով հաշվետվության մեջ տրված դրական գնահատականից՝ Վրաստանի կառավարությունը Եվրամիությունից կստանա ութ միլիոն եվրոյի ֆինանսական աջակցություն: Վերոնշյալ աջակցությունն իրականացվում է ENPARD ծրագրի շրջանակներում: Այդ մասին հոկտեմբերի 16-ին համամետ մամլո ասուլիսում հայտարարեցին Վրաստանի գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան եւ Վրաստանում Եվրամիության դեսպան Յանոշ Հերմանը:

ՏԵՍԱԿԵՏ

## ԶՈՒՐԱԲ ԱԲԱՇԻՁԵ. «ՌՈՒՍԱԿԱՆ ԳԱԶԻ ՍՏԱՑՄԱՆ ՄԵՋ ՎԱՏ ԲԱՆ ՉԵՄ ՏԵՍՆՈՒՄ»

***Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցերով Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն, անդրադառնալով ռուսական «Գազպրոմից» հնարավոր մատակարարումների թեմային, հայտարարեց, որ Ադրբեջանը կմնա Վրաստանի գլխավոր գազամատակարար երկիրը, եթե անգամ մեծացվի գազատարով ռուսական գազի տարանցումը:***

«Մենք երկար տարիներ գազ ենք ստանում Ռուսաստանից: Դա տարանցման մասն է, որը մենք թույլատրում ենք Ռուսաստանից դեպի Հայաստան: Եթե աճի տարանցման ծավալը, եւ մենք ավելի շատ գազ ստանանք, ապա ես որեւէ վատ բան չեմ տեսնում դրանում: Ադրբեջանը հանդիսանում եւ կշարունակի մնալ մեր ռազմավարական գործընկերն այդ պլանում: Դրանք կոմերցիոն հարցեր են, որոնք քննարկում են էներգետիկայի նախարարությունն ու տնտեսական թիմը»,- ասաց Զուրաբ Աբաշիձեն:



### ԶՎԻԱԴ ԿՎԱՃԱՆՏԻՐԱՁԵՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ



*«Վրացական երազանք» կոալիցիայի քաղաքական խորհրդում խորհրդարանական մեծամասնության ղեկավար է նշանակվել Զվիադ Կվաճանտիրաձեն:*

*Մեծամասնության լիդերի պաշտոնում նրա թեկնածությունը հավանության արժանացավ նաեւ «Վրացական երազանք» խմբակցության նիստում:*

### ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ՝ ԾԱԽՍԱԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՄԱՐ

*Հոկտեմբերի 21-ից սոցիալապես անպաշտպան ընտանիքները Թբիլիսիում, հոկտեմբերին ծախսած էլեկտրաէներգիայի համար, սակագնի փոփոխման առնչությամբ, կստանան փոխհատուցում: Լրացուցիչ դրամական օգնությունը կցուցաբերի Թբիլիսիի քաղաքապետարանը:*

*Այն ընտանիքները, որոնց վարկանշային միավորը չի գերազանցում 70 հազարը, իրենց բանկային հաշվի վրա կստանան նշյալ փոխհատուցումը: Ներկա դրությամբ, Թբիլիսիում հաշվվում է նման 35415 ընտանիք, նրանց, ընդհանուր առմամբ, կփոխանցվի 424 980 լարի:*

### ԱՄԵՐԻԿՅԱՆ ՌԱԶՄԱՆԱՎԸ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

*ԱՄՆ ռազմածովային ուժերի «Պորտեր» ռազմանավը ժամանել է Բաթումի: Այցի նպատակը ԱՄՆ 6-րդ նավատորմի ու Սեւծովյան ավազանի երկրների միջեւ համագործակցությանը նպաստելն է, Սեւծովյան անվտանգությունն ամրապնդելը:*

*Այցի ընթացքում, պլանավորված են համատեղ վարժանքներ ամերիկացի նավաստիների ու Վրաստանի առափնյա պահպանման աշխատակիցների մասնակցությամբ:*

*Ամերիկյան ռազմանավին դիմավորելու արարողակարգին մասնակցեցին Աջարիայի կառավարության ղեկավար Արչիլ Խաբաձեն, Բաթումիի փոխքաղաքապետ Բագրատ Մանվելիձեն, ինչպես նաեւ ԱՄՆ ծովային հետեւակի զորքերի կցորդ, փոխգնդապետ Ուիլյամ Կոներին:*

*«Պորտերը» Arleigh Burke դասի էսկադրոնային ականակիր է:*

### ՍԱՀՄԱՆՎԵԼ Է ԹՄՐԱԹԵՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

*Վրաստանի խորհրդարանի առողջապահության կոմիտեի նախագահ Դմիտրի Խունդաձեն շնորհակալություն է հայտնել Վրաստանի ՆԳ նախարարությանը քաղաքացիների թմրաթեստավորման կարգի փոփոխման կապակցությամբ:*

*«Փողոցում թմրաթեստավորման հարցով կային լուրջ դիտողություններ, քանի որ վիճակագրական տվյալները վկայում են, որ փողոցում կանգնեցված քաղաքացիների 70 տոկոսից ավելին թմրանյութեր չէր օգտագործում: Մի կողմից քաղաքացիների իրավունքի խախտում է դա եւ արժանապատվության նսեմացում, մյուս կողմից՝ բյուջետային միջոցների անիմաստ ծախսում: Մենք խնդրանքով դիմեցինք ՆԳ նախարարությանը՝ մշակել այն չափորոշիչները, որոնց դեպքում քաղաքացին կարող է ենթարկվել թմրաթեստավորման: Արդյունքում, ներքին գործերի նախարարի հրամանագրով փոխվել է 2015 թվականի սեպտեմբերի 30-ի կարգը»,- հայտարարեց Խունդաձեն եւ հավելեց, որ նոր կարգի համաձայն, պարեկային ոստիկանությունը քաղաքացուն կարող է թմրաթեստավորման ստուգում անցկացնել միայն նրա կողմից հասարակական կարգի խախտման կամ այլ իրավախախտումների դեպքում:*

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# «ԵՐԲ ԽՈՍՈՒՄ ԵՆ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԸ...»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ատլետիկայի փառքի դահլիճում:

*- Պարոն դեսպան, ավելի քան մեկ տարի առաջ Դուք գլխավորեցիք Վրաստանում դիվանագիտական ներկայացուցչությունը: Այդ ժամանակահատվածում կայացան մի շարք փոխայցելություններ...*

- Նախ կցանկանայի նշել, որ վերջին տարիներին մենք մեր երկու երկրների միջեւ միջպետական կապերի լուրջ ինտենսիֆիկացման վկաներն ենք՝ ինչպես ամենաբարձր մակարդակով, այնպես էլ՝ տարբեր գերատեսչությունների ղեկավարների մակարդակով: Միայն անցյալ տարի կայացան տարբեր մակարդակներով ավելի քան 20 այցելություններ: Ընդ որում, 2014 թվականի հունիսին, դեսպանի պաշտոնում իմ նշանակման ժամանակահատվածում, այցով Վրաստան ժամանեց Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, ապա, 2014 թվականի օգոստոսին Հայաստան այցելեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Իսկ դա նշանակում է, որ մեր երկու երկրների միջեւ հերթական անգամ կայացավ «ժամացույցների համադրումը»՝ երկու կողմերին հուզող հիմնախնդիրների հարցով, կանխագծվեցին երկկողմ միջպետական կապերի նոր հեռանկարները բոլոր ուղղություններով: Բարի ավանդույթի վերածված բարձր մակարդակով քաղաքական պարբերական կապերը բարենպաստ պայմաններ են ստեղծել երկկողմ տնտեսական համագործակցության զարգացման համար: Ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունքում, ձեւակերպվել եւ արդեն իրականացման փուլում են առաջնահերթային ուղղություններով տնտեսական գործընկերությունը, որը ներառում է էներգետիկական ու տրանսպորտային ոլորտները, զբոսաշրջությունը եւ գյուղմթերքների վերամշակման ոլորտում համագործակցությունը: Ընդ որում, մեր տնտեսական կապերի ներուժը բարձր է, եւ, միջգերատեսչական հորիզոնական կապերի մշտական կատարելագործմամբ, մեր առջեւ բացվում են համագործակցության նոր հորիզոններ: Հարկ է նշել, որ հաճախակի, առաջին հերթին, միջպետական մակարդակով փոխայցելությունների էստաֆետը շարունակվեց նաեւ 2015 թվականին: Միայն ընթացիկ տարվա անցած ժամանակահատվածում կայացավ 10 այցելություն: Բավական է նշել, որ անցյալ տարվա դեկտեմբերից մինչ օրս ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը չորս անգամ այցելել է Վրաստան: Ուրախալի է, որ մեր երկու երկրների վարչապետերի միջեւ ձեւավորվել է այնպիսի կառուցողական գործընկերություն, որը թույլ է տալիս հիմնել հուսալի հիմքեր Հայաստանի եւ Վրաստանի միջեւ առեւտրա-տնտեսական կապերը փոխադրելու ծրագրային, համալիր մակարդակի վրա: Հենց միջին եւ երկարաժամկետ ծրագրերի միջոցով մենք մտադիր ենք ձեւակերպել գործուն տնտեսական լծակներ համատեղ առաջադրած խնդիրների լուծման, դրանց պարբերական կատարելագործման եւ պայմանագրային-օրենսդրական բազայի ընդլայնման համար: Չեմ կասկածում, որ նման համագործակցությունը մեզ թույլ կտա համատեղ հաղթահարել համաշխարհային էկոնոմիկայի կողմից մեր երկրների առջեւ ծագող մարտահրավերներն ու հիմնախնդիրները:

*- Ինչպիսի՞ն է երկու երկրների միջեւ տնտեսական, առեւտրական հարաբերությունների դինամիկան եւ ապրանքաշրջանառության ծավալը:*



- Վերոնշյալից ելնելով՝ ըստ իս, ծայրաստիճան շահավետ եւ անհրաժեշտ է Հայաստանի եւ Վրաստանի միջեւ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական 10-րդ նիստը: Այդ հանձնաժողովի նիստը լրացուցիչ ազդակ եւ ինստիտուցիոնալ բնույթ կհաղորդի մեր միջկառավարական կապերին: Մոտ ժամանակներում նիստի անցկացման նախապատրաստական եւ փորձագետների աշխատանքի արդյունավետության բարձրացման գործին կարող է նպաստել 2014 թվականի մարտից արդեն գործող առեւտրա-տնտեսական հարցերով հայ-վրացական աշխատանքային խմբի գործունեության ակտիվացումը: Բնականաբար, մեր երկկողմ հարաբերությունների խորացման կարեւորագույն բաղադրիչներից մեկը, առանձնապես սահմանադրական փոփոխությունների պայմաններում, միջխորհրդարանական կապերի խորացումն է: Այդ առումով, կցանկանայի ընդգծել մեր երկու երկրների միջեւ միջխորհրդարանական կապերի խորացման ուրախալի փաստը, ինչի վկայությունն են 2014 թվականի հոկտեմբերին ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանի այցը Վրաստան եւ ընթացիկ տարվա փետրվարին Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու պատասխան այցը Հայաստան:

Ինչ վերաբերում է Հայաստանի եւ Վրաստանի միջեւ ապրանքաշրջանառության դինամիկային, ապա 2012-ից ընդհուպ մինչեւ 2015 թվականը նկատվում է դրա հետեւողական աճը, ինչպես ապրանքը թողարկող երկրի, այնպես էլ առեւտուրն անող երկրների ցուցանիշներով: 2012 թվականին երկկողմ ապրանքաշրջանառության թողարկող երկրի ցուցանիշը կազմեց մոտ 120 միլիոն ԱՄՆ դոլար, 2013-ին՝ գրեթե 152 միլիոն, 2014-ին՝ 156 միլիոն: Ընդ որում, առեւտուր անող երկրների առումով ապրանքաշրջանառության ցուցանիշը 2013 թվականին հասավ տպավորիչ, կես միլիարդ դոլարի մակարդակի, 2014-ին այդ մակարդակը գերազանցվեց:

*- Այն բանից հետո, երբ Հայաստանը դարձավ Եվրասիական տնտեսական միության անդամ, Բրյուսելում ընդգծում են, որ ԵՄ-ը հարգանքով է վերաբերվում երկրի ընտրությունը: «Մենք պատրաստ ենք համագործակցել Հայաստանի հետ եւ հարգում ենք նրա ընտրոթյունը»,- վերջերս Երեւան կատարած այցի ժամանակ նշեց Եվրախորհրդի ղեկավար Դոնալդ Տուսկը: Հետաքրքիր է՝ Ձեր գնահատականը ոչ միայն որպես դիվանագետ, այլ որպես շարքային քաղաքացի, ԵՄ-ի հետ Հայաստանի հարաբերությունները, ինչպիսի՞ն եք տեսնում այդ հարաբերությունների ապագան:*

- Ցանկանում եմ նշել, որ Հայաստանը շարունակում է ակտիվորեն համագորակցել ԵՄ-ի հետ, մասնավորապես, իրավական բարեփոխումների եւ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում, եւ մենք բարձր ենք գնահատում եվրոպական գործընկերների ներդրումը մեր երկրում քաղաքացիական հասարակության զարգացման գործում: Հարկ է նաեւ նշել, որ Հայաստանի եւ Եվրամիության միջեւ գոյություն ունի առեւտրի արտոնյալ կարգ՝ GSP+, ինչը, ԵՄ շուկա մուտք գործելիս, ապահովում է մաքսային ընթացակարգը հայկական 6400 անուն արտադրանքի համար: Բացի այդ, ԵՄ-ը շարունակում է օգնություն ցուցաբերել Հայաստանին, որը 2015-2017 թվականների ժամանակահատվածի համար կկազմի շուրջ 170 միլիոն եվրո, ինչը գերազանցում է նախորդ ցուցանիշը: Ինչ վերաբերում է իրավական բազայի պայմանագրին, ապա 2014 թվականի կեսերից ՀՀ եւ ԵՄ-ը վերսկսեցին համագործակցության հնարավոր ձեւաչափի մասին բանակցությունները, որոնք ներառում են ոչ միայն քաղաքական, այլեւ տնտեսական բաղադրիչներ, հենց այդ մասին էլ խոսեց պարոն Դոնալդ Տուսկը: Հուսով ենք, որ, 1996 թվականի գործընկերության մասին համաձայնագրի փոխարեն, Եվրամիության հետ կստորագրվի նոր փաստաթուղթ, որտեղ, բացի քաղաքական բաժնից, տեղ կհատկացվի նաեւ DCFTA-ի առանձին դրույթներին:

Սակայն, վերադառնանք գլխավոր թեմային եւ նշենք, որ Հայաստանի համար Վրաստանի հետ սերտ եւ կառուցողական հարաբերությունները միշտ ունեցել են առանձնակի նշանակություն՝ ինչպես տնտեսական անվտանգության, այնպես էլ՝ տարածաշրջանային կայունության պահպանման տեսանկյունից: Հաշվի առնելով Եվրասիական ինտեգրման նախագծին մասնակցության ՀՀ-ի որոշումը եւ Վրաստանի կողմից ԵՄ-ի հետ Ասոցիացման համաձայնագրի ստորագրումը, կցանկայի նշել, որ մենք ի սկզբանե կողմնորոշված ենք, որպեսզի մեր միջպետական հարաբերությունների ողջ համալիրը նոր պայմաններում շարունակեր իր բնական եւ արգասաբեր զարգացումը: Կարեւոր է, որ, ԵԱՏՄ անդամակցվելուց հետո, Հայաստանի եւ Վրաստանի միջեւ պահպանվում է ազատ առեւտրի կարգը: Կցանկանայի նաեւ ավելացնել, որ շատ փորձագետներ գտնում են, որ վրացական լաբորատորիաներում հայկական ապրանքների հավաստագրումը եւ հայկական լաբորատորիաներում վրացական ապրանքների հավաստագրումը, Հայաստանին կարող է արտոնյալ մատչելիություն ապահովել ԵՄ շուկան, իսկ Վրաստանին՝ ԵԱՏՄ-ի անդամ երկրների շուկան: Ես բարձր եմ գնահատում մեր երկրի կառուցողական ու բարեկամական հարաբերությունները Եվրամիության հետ:

*- Դուք մի քանի տարի ապրել եք ԱՄՆ-ում, որտեղ հայկական համայնքը բավականին համախմբված է: Որքա՞ն է այնտեղ ապրող հայերի թիվը:*

- ԱՄՆ բնակչության գրանցման բյուրոյի պաշտոնական տվյալներով, 2011 թվականին այդ երկրում ապրում էր շուրջ կես միլիոն հայ, սակայն իրականում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում էթնիկ հայերի թվաքանակի վերաբերյալ ստույգ վիճակագրություն գոյություն չունի: Ես հավատում եմ նախագահ Բարաք Օբամայի խոսքերին, ով իր ելույթներից մեկում նշեց, որ երկրում ապրում է 1540000 հայ, որից 1300000-ը՝ Կալիֆոռնիայի նահանգում եւ, առաջին հերթին, Լոս Անջելեսում: Հոլիվուդի շրջաններից մեկն անգամ կոչել են «Փոքր Հայաստան», իսկ Կալիֆոռնիայի Գլենդել քաղաքը՝ «հայկական քաղաք», քանի որ բնակիչների կեսը հայեր են: Հարկ է նշել, որ Նյու Յորքում էլ բավականին նշանակալից է հայկական համայնքը, որտեղ հաշվվում է շուրջ 100 հազար հայ: Իրոք, ԱՄՆ-ի հայկական համայնքը բավականին կազմակերպված է:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

# ԻՆՉ ԵՆ ՎԿԱՅՈՒՄ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

NATIONAL DEMOCRATIC INSTITUTE

*Ամերիկյան Ազգային ժողովրդավարական ինստիտուտը (NDI) հրապարակեց Վրաստանում օգոստոսի 8-ից մինչեւ սեպտեմբերի 10-ը անցկացված «Հասարակական կարծիքը Վրաստանում» հետազոտության արդյունքները: Սոցիոլոգիական հետազոտության հարցմանը Վրաստանի մասշտաբով մասնակցել է 448 մարդ: Հետազոտությունը ֆինանսավորվել է Շվեդիայի միջազգային զարգացման եւ համագործակցության գործակալության (SIDA) կողմից, այն անցկացրել է Կովկասի հետազոտական ռեսուրսների կենտրոնը (CRRC): Վիճակագրական սխալանքը կազմել է 3,01 տոկոս:*

### Ո՞Ր ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆՆ ԵՔ ՀԱՄԱԿՐՈՒՄ

Հարցին, թե ո՞ր կուսակցությանն եք համակրում, հայացքներով ո՞րն է ձեզ ավելի մոտ, հարցման ենթակվածների 14 տոկոսը անվանեց «Վրացական երազանքը» (2012 թվականի նոյեմբերյան հարցման արդյունքներով այն կազմում էր 63 տոկոսը): 13 տոկոսը գերադասությունը հանձնեց «Ազգային շարժմանը»:

### Ո՞Ր ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԿՑԵԼ

Վրաստանի բնակչության շուրջ մեկ երրորդը՝ 31 տոկոսը, պաշտպանում է Եվրամիությանը երկրի անդամակցությունը: Գրեթե նույնքան է կազմում նաեւ Եվրասիական միությանը երկրի անդամակցության կողմնակիցների թիվը: Եվրամիությանը, ինչպես նաեւ Եվրասիական միությանն անդամակցության գաղափարը չի պաշտպանում հարցվածների 46 տոկոսը: Միաժամանակ, 28 տոկոսը գտնում է, որ Վրաստանը պետք է անդամակցի ԵԱՏՄ-ին: Այդ առումով, ԵՄ-ի կողմնակիցների թիվը կազմում է 47 տոկոս: Հարցվածների 9 տոկոսը հանդես է գալիս ցանկացած անդամակցության դեմ:

Հատկանշական է, որ հարցվածների 45 տոկոսը գտնում է, որ Վրաստանը մեծ օգուտներ կունենա ՆԱՏՕ-ին եւ ԵՄ-ին անդամակցելու դեպքում (անցյալ տարվա արդյունքներով, նմանները կազմում էին 54 տոկոսը), իսկ 30 տոկոսը (2014-ի 19 տոկոսի դիմաց), ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի փոխարեն, գերադասում է Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավումը: Հարցվածների 12 տոկոսը պաշտպանում է միաժամանակ ԵԱՏՄ-ին եւ ԵՄ-ին Վրաստանի անդամակցության գաղափարը:

ԵԱՏՄ-ի անդամակցության կողմնակիցներից 71 տոկոսը գտնում է, որ դա կբարելավի տնտեսական վիճակը, 40 տոկոսի համոզմամբ կնպաստի Ռուսաստանի հետ անայցեգրային կարգի հաստատմանը, 35 տոկոսը գտնում է, որ կամրացնի Վրաստանի անվտանգությունը, 26 տոկոսի համոզմամբ դա կօգնի երկրի տարածքային ամբողջականության վերականգնմանը:

### ԵԹԵ ՎԱՂԸ ԱՆՑԿԱՑՎԵՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե վաղը անցկացվեին խորհրդարանական ընտրություններ, ապա, ԱՄՆ-ի Ազգային դեմոկրատական ինստիտուտի (NDI) հարցման արդյունքներով, «Վրացական երազանք» կառավարող կոալիցիայի օգտին կքվեարկեր բնակչության 11 տոկոսը, այն դեպքում, երբ ընդդիմադիր՝ «Ազգային շարժման» կողմնակիցները կկազմեին 13 տոկոս:

Հիշեցնենք, որ այս տարվա ապրիլին կառավարող կոալիցիայի օգտին պատրաստ էր քվեարկել հարցվածների 24 տոկոսը, իսկ Ազգայնականների օգտին՝ 16 տոկոսը:

Նոր հարցման արդյունքներով, «Վրաստանի հայրենասերների միավորումը» եւ պաշտպանության նախկին նախարար Իրակլի Ալասանիայի «Մեր Վրաստանը-Ազատ դեմոկրատներ» ընդդիմադիր կուսակցությունը կիսել են երրորդ տեղը, նրանց օգտին կքվեարկեր հարցվածների 4 տոկոսը: 3 տոկոս ցուցանիշով չորրորդ տեղն զբաղեցրել է Լեյբորիստական կուսակցությունը: Հարցման մասնակիցների 14 տոկոսը հայտարարել է, որ ընտրություններում չէր պաշտպանի որեւէ կուսակցության:

### ՉԳԻՏԵՆ՝ ՈՒՄ ՕԳՏԻՆ ՔՎԵԱՐԿԵԼ

Հարցման արդյունքներով, հարցվածների 59 տոկոսը հայտարարեց, որ չգիտի, թե ում օգտին է քվեարկելու, 28 տոկոսը որոշումն արդեն ընդունել է:

Ինչ վերաբերում է ընտրություններին մասնակցության հարցին, ապա 49 տոկոսը վստահեցրեց, որ անպայման կմասնակցի, իսկ 51 տոկոսը իր մասնակցությունը բացառում է:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ ԵՆ ՔԱՂԱՔԱԳԵՏՆԵՐԸ

*Վրաստանի վարչապետ* ***Իրակլի Ղարիբաշվիլին*** *կասկածի տակ դրեց ամերիկյան Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) գործունեությունը եւ հայտարարեց, որ չի հավատում կազմակերպության անցկացրած հարցման արդյունքներին: «Չեմ կարող լուրջ մեկնաբանություն տալ: Երկար տարիներ բազում հարցեր են առաջացել այդ կազմակերպության գործունեության վերաբերյալ: Սակայն այն անձինք, ովքեր անցկացնում են այդ հարցերը, ուղղակիորեն կապված են «Միասնական ազգային շարժում» կուսակցության հետ: Միեւնույն ժամանակ ցանկանում եմ իմ հարգանքը հայտնել այդ ինստիտուտի հանդեպ: Լավագույն սոցհարցումն ընտրությունների օրն է»:*

*Վրաստանի էկոնոմիկայի ու կայուն զարգացման նախարար* ***Դմիտրի Կումսիշվիլին*** *հայտարարեց, որ NDI-ն աջակցում է նախկինում իշխող «Միասնական ազգային շարժում» կուսակցությանը, ինչի համար էլ չի հավատում նրա անցկացրած սոցհարցման արդյունքներին:*

*Մեկնաբանելով NDI-ի հարցման արդյունքները՝ հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար* ***Պաատա Զաքարեիշվիլին*** *հայտարարեց, որ մարդիկ իրենց դիրքորոշումը կվավերացնեն ընտրություններին: «Անկախ հարցման արդյունքներից, ամեն ինչ պարզ կդառնա ընտրությունների ժամանակ: Մեկ տարի անց, ինքներդ կհամոզվեք, թե որքանով է հասարակությունը վստահում «Վրացական երազանքին»,- հայտարարեց Զաքարեիշվիլին:*

*Իր հերթին, «Ազգային շարժման» միջազգային հարցերով քարտուղար* ***Գիգա Բոկերիան*** *նշեց, որ հետազոտությունը արտացոլում է այն իրավիճակը, որը երկիրն ստեղծել են Իվանիշվիլին եւ նրա թիմը: «Նրանք երկիրը տանում են կործանման, եւ մարդիկ դա տեսնում են: Հենց դրա արդյունքը նրանց վարկանիշի աղետալի անկումն է»:*